ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը**

Հովհաննես Ներսիսյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի օգնական:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

2025 թվականի ապրիլի 7-ից 11-ը, Կահիրե, Եգիպտոսի Արաբական Հանրապետություն:

4. **Հրավիրող կողմը.**

Եվրոպական կրթական հիմնադրամի տնօրեն՝ Պիլվի Տորստի:

5. **Գործուղման նպատակը.**

Աշխատանքի շուկայի ակտիվ քաղաքականության (ALMP) արդյունավետության գնահատման վերաբերյալ գիտելիքի փոխանակման սեմինարի մասնակցություն:

6. **Քննարկված թեմաները.**

Սեմինարի ընթացքում քննարկվեցին հետևյալ հիմնական թեմաները՝
Աշխատանքի շուկայի ակտիվ քաղաքականությունների (ALMPs) ազդեցության գնահատման մեթոդաբանություններ, ներառյալ պատահականացված գնահատումները:
Ապացուցողական քաղաքականությունների մշակման և իրականացման գործընթացներ՝ հիմնված տվյալների վրա:
Հանրային զբաղվածության ծառայությունների (PES) դերը ALMP-ների արդյունավետության բարձրացման գործում:
Միջազգային լավագույն փորձի փոխանակում ALMP-ների նախագծման և իրականացման ոլորտում:
Քաղաքականությունների գնահատման և իրականացման նորարարական մոտեցումներ՝ ուղղված զբաղվածության խթանմանը:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Սեմինարի ընթացքում ունեցել եմ մի շարք հանդիպումներ՝ ուղղված միջազգային համագործակցության խթանմանը: Քննարկվել են Հայաստանում ԵԿՀ նախաձեռնությունների իրականացման, ինչպես նաև հայկական կողմի ներգրավման հնարավորությունները: Ձևավորվել են համագործակցության նախնական պայմանավորվածություններ Շվեդիայի և Հյուսիսային Մակեդոնիայի հանրային զբաղվածության ծառայությունների, RAND Corporation-ի և Egypt Impact Lab-ի հետ:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Հանդիպումների ժամանակ որոշումներ չեն ընդունվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

- Ազդեցության գնահատման նորարարական մեթոդաբանությունների ներդրում
- Ապացուցողական քաղաքականությունների մշակման կարողությունների զարգացում
- Միջազգային համագործակցության խորացում, մասնավորապես վերոնշյալ կառույցների հետ (ԵԿՀ, Շվեդիայի հանրային զբաղվածության ծառայություն, Հյուսիսային Մակեդոնիայի հանրային զբաղվածության ծառայություն, RAND Corporation, Egypt Impact Lab)

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

15.04.25 **Հովհաննես Ներսիսյան**